ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

ք. Գավառ ***26.07.2018 թ. ժամը 11.00***

Նախագահում էր ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Իշխան Սաղաթելյանը, մասնակցում էին մարզի խորհրդի 57 անդամներից 54-ը:

Մասնակցում էին ՀՀ Գեղարքունիքի մարզպետի տեղակալներ Նարեկ Գրիգորյանը, Վահան Զարոյանը, Անուշավան Ղազարյանը, մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Սևակ Խլղաթյանը, մարզպետի խորհրդական Արտաշես Նիկոյանը, մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Ալբերտ Աղեկյանը, մարզպետարանի աշխատակազմի վարչությունների պետերը, բաժինների վարիչները, մարզի իրավապահ մարմինների ղեկավարներ և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Օրակարգում՝

1. 2018 թվականի առաջին կիսամյակում Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքային բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման արդյունքների մասին:

/Զեկ. Յուրա Մուշեղյան - մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ/

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում 2018 թվականի գյուղատնտեսական աշխատանքների ընթացքի մասին:

/Զեկ. Համբարձում Համբարձումյան – մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության/

3. <<Մաքուր Հայաստան>> ծրագրի շրջանակում Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում 2018 թվականին կատարված ու նախատեսվող աշխատանքների և համայնքապետարանների հաստիքացուցակների վերանայման մասին:

/Զեկ. Վանիկ Հարությունյան – մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ/

4. Այլ հարցեր:

Ելույթներ ունեցան՝

Արման Ղազարյանը - Զոլաքար համայնքի ղեկավար
Ռոբերտ Խաչատրյանը - Աստղաձոր համայնքի ղեկավար

Հայտարարությունով հանդես եկան՝

Յուրա Մուշեղյանը - մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ

Համբարձում Համբարձումյանը - մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտնտեսության և բնապահպանության վարչության պետ

Վանիկ Հարությունյանը - մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ

Մարզի խորհրդի աշխատանքներն ամփոփեց մարզպետ Իշխան Սաղաթելյանը:

1. Առաջարկվեց մարզի համայնքների ղեկավարներին՝

1) ամենօրյա աշխատանքներ տանել համայնքների 2018 թվականի բյուջեների սեփական եկամուտների /հողի հարկ, գույքահարկ, տեղական տուրքեր, հողի և գույքի վարձակալությունից եկամուտներ/ հավաքագրման ու աշխատավարձերի գծով կուտակված պարտքերը մարելու ուղղությամբ և սեփական եկամուտների համամասնություններով պահանջվող ցուցանիշներն ապահովելու համար.

2) պետական մարմիններից ստացված գրություններին ու քաղաքացիների դիմումներին պատասխանել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում և բացառել դրանց ուշացումով պատասխանելը կամ չպատասխանելը.

3) յուրաքանչյուր ուրբաթ ՀՀ գյուղատնտեսության նախարարություն հաշվետվություն ներկայացնելու համար ներկայացված ձևաչափին համապատասխան հինգշաբթի օրերը մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչություն ներկայացնել օպերատիվ տեղեկատվություն բերքահավաքի ընթացքի վերաբերյալ.

4) ամենօրյա ուշադրության կենտրոնում պահել խոտհնձի ու հացահատիկի բերքահավաքի աշխատանքների ընթացքը և խնդիրներ առաջանալու դեպքում միջոցներ ձեռնարկել դրանց արագ լուծումներ տալու համար, անհրաժեշտության դեպքում դիմել ՀՀ Գեղարքունիքի մարզպետին.

5) մեկ անգամ ևս վերանայել ֆիզիկական անձանցից հավաքագրվող աղբահանության վճարները.

6) համայնքների վարչական տարածքներում գործող տնտեսվարող սուբյեկտների /իրավաբանական անձանց/ հետ կնքել աղբահանության պայմանագրեր.

7) ավագանիներով վերանայել համայնքապետարանների հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը, հաստիքացուցակներում ներառել նաև անասնաբույժի հաստիք.

8) մինչև 2018 թվականի օգոստոսի 20-ը համայնքներում ունենալ անասնաբույժեր.

9) համայնքների վարչական տարածքներում առկա մշակութային, պատմամշակութային և զբոսաշրջության համար հետաքրքիր վայրերում ու հանգստյան գոտիներում տեղադրել <<Մաքուր Հայաստան>> վերտառությամբ ցուցանակներ:

ՄԱՐԶՊԵՏ ԻՇԽԱՆ ՍԱՂԱԹԵԼՅԱՆ